Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Հայ վիմագիր բանաստեղծությունը (XVIII—XIX դդ.), ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989, 380 էջ:

Հայերեն վիմագիր արձանագրությունների գերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմության և մշակույթի ամենատարբեր բնագավառների քննության համար անգնահատելի են։ Ուստի վիմագիր արձանագրությունների ամեն մի հրապարակում, դրանց հենքի վրա իրականացված ամեն մի ուսումնասիրություն պետք է ողջունել։ Վիմագիր բնագրերի հրատարակման ասպարեզում ցայսօր որոշակի աշխատանք է կատարված։ Ուսումնասիրողների սեղանին են «Դիվան հայ վիմագրության» վեց պրակը, առաջիկայում սպասվում են նորերը։ Սակայն տարբեր բնույթի վիմագրերի քննությանը նվիրված աշխատությունները դեռևս սակավ են։ Այնպիսի կարևոր բնագավառ, ինչպիսին չափածո վիմագրությունն է, գրեթե ուշադրության չի արժանացել։ Առանձին նմուշներ ներկայացված են XIX—XX դդ. տեղագրական աշխատություններում, սակայն հատուկ քննության չեն ենթարկվել, չեն դիտվել որպես հայ միջնադարյան գրականության յուրօրինակ և արժեքավոր գործեր։ Թերևս շահեկան բացառություն կարող է համարվել Գ. Հնասերի ուսումնասիրությունը՝ նվիրված հայերեն տապանաքարային չափածո հիշատակագրություններին («Բազմավեպ», 1928, № 7, 8, 9, 11, 12, 1929, 1, 2, 3, 5, 7, 8)։ Սերգո Գևորգյանի «Հայ վիմագիր բանաստեղծությունը (XVIII—XIX դդ.)» ուսումնասիրությունը մեծապես լրացնում է այս բնագավառում տոկա բացը։

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, յոթ բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է վիմագիր բանաստեղծության սյուժետային որոշակի ուղղվածությանը։ Աշխատության ներածականում հեղինակը արժեքավորում է վիմագիր արձանագրությունները, մասնավորելով չափածո վկայագրերը, դրանք բնութագրելով որպես միջնադարյան չափածո գրական ստեղծագործության մի ուրույն բնագավառ, որ աչքի է ընկնում իր սյուժետային բազմաբնույթ հենքով և արտահայտման եղանակով։

Ներկայացնելով վիմագիր բանաստեղծության զարգացման ժամանակագրությունը, հեղինակն առանձնացնում է հիմնականում երկու ժամանակահատված՝ սկզբնավորումից մինչև XVIII դ. և դրանից հետո ընկած ժամանակաշրջանը։ Մինչև XVIII դ. չափածո վիմագրերը նույնպես ունեցել են զարգացման փուլեր։ Եթե դրանք «ստեղծման սկզբնական շրջանում կատարման ու գաղափարական բովանդակության տեսակետից կրում են պարզունակության կնիք, թեմատիկան էլ աղքատիկ էր, ապա հետագա դարերում այն աչքի է ընկնում իր գաղափարայնությամբ և թեմատիկայի հարստությամբ» (էջ 8)։ XVIII—XIX դդ. վիմագիր բանաստեղծությունները հստակորեն առանձնանում են ինչպես աշխարհագրական լայն ընդգրկումով, այնպես էլ ոճի հարստությամբ ու բազմազանությամբ։ Այս ժամանակահատվածի վիմագիր բանաստեղծությունը, որին նվիրված է Ս. Գևորգյանի ուսումնասիրությունը, կարելի է դիտել իբրև հայ չափածո գրականության լիարժեք բաղկացուցիչ մաս։

Ներածության մեջ հեղինակը ներկայացնում և արժեքավորում է նաև իր նախորդների ներդրումը վիմագիր չափածո բնագրերի հավաքման և հրատարակման ասպարեզում։ Ս. Գևորգյանը այս ժանրի զարգացումն ու կատարելագործումը առնչում է երկրի սոցիալ-քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի հետ, որով պայմանավորված է հայ ժողովրդի էենսագործունեության համարյա բոլոր ոլորտների արտացոլումը վիմագիր բանաստեղծությունների մեջ։ Հեղինակը քննում է նաև վիմագիր բանաստեղծությունների լեզվական առանձնահատկությունները՝ զարգացման միտումը տեսանելով գրաբարից դեպի ժողովրդին առավել հասկանալի աշխարհիկ լեզուն, որ հիմնականում գերիշխող է դառնում սկսած XVIII դարից։ Շարադրանքում տեղ է հատկացված վիմագիր բանաստեղծության տարառոճ բնույթին և առանձնահատկություններին, գիտված են որոշակի աղերսներ ժողովրդական քնարերգության նմուշների հետ։ Ուշադրավ են հեղինակի նկատառումները՝ կապված հորինման եղանակների, թվագրման և թվականների ձևերի հետ։

Առաջին՝ «Մաքառման արձագանքները», բաժնում հեղինակն անդրադառնում է չափածո այն վկայագրերին, որոնցում իր արտահայտությունն է գտել հայ ժողովրդի պայքարը օտար

նվաստողների դեմ և հանուն քրիստոնեական հավատի։ Գրականագիտական հանգամանալից վերլուծության են ենթարկված բազմաթիվ չափածո տապանագրեր, որոնք գեղարվեստական արժանիքներից զատ ունեն աղբյուրագիտական մեծ արժեք։ Այս վկայագրերը հաճախ պատմականայնպիսի մանրամասներ են պարունակում, որպիսիք չենք կարող գտնել նույնիսկ սատենադրական աղբյուրներում։

Հայ ժողովրդի ճակատագրով պայմանավորված պանդխտության թեման իր գեղարվեստական արտացոլումն է գտել նաև վիմագիր բանաստեղծություններում, որոնց քննությունն է նվիրված աշխատության «Պանդխտության արձագանքներ» բաժինը։ Ներկայացնելով տարադրության և պանդխտության պրոբլեմը ուշ միջնադարյան չափածո և արձակ դրականության, բանահյուսության մեջ ու երգարվեստում, հեղինակը, սակայն, շահեկանորեն առանձնացնում է չափածո քարեղեն վկայագրերը, որոնցից շատերը «դրական անուրանալի արժեք ունեցող ստեղծագործություններ են» և պետք է իրենց արժանի տեղն ունենան հայ գեղարվեստական գրականության մեջ (էջ 112)։

Գրքի բաժիններից մեկը վերնագրված է «Տրտունջքի և բողոքի նվաղներ»։ Այստեղ բերված վիմագիր բանաստեղծություններն արտացոլում են անհատի սոցիալական գոյավիճակը։ Անհատը ներկայանում է իր կենսագործունեության տարաբնույթ հանգամանքներում, որ, անշուշտ, առկա սոցիալ-քաղաքական, տնտեսական իրականության արգասիք են։ Ի՞նչ ձևով է մարդն ընկալում այդ իրականությունը, ինչպիսի՞ վերաբերմունք ունի դրա նկատմամբ, և իր հերթին իրականությունը ի՞նչ դրոշմ է թողնում մարդու հոգեբանության վրա։ Այս ծարոյա-հոգեբանական մթնոլորտն է արտացոլված բաժնում համակողմանի վերլուծված վիմագիր բանաստեղծություններում։

Հայ ժողովուրդը, դարեր շարունակ հեծելով օտար նվաճողի լծի տակ ու անդուլ աշատագրական պայքար մղելով, իր դրական հերոսների բերանով բարբառել է ազատություն, նվիրվածություն հայրենիքին։ Վիմագիր բանաստեղծություններում նույնպես բազմիցս արտահայտված են հայրենասիրական մոտիվներ։ Այսօրինակ բանաստեղծություններում հերոսը նոչ է անում հակառակ դժբախտությունների, հալածանքների ու կոտորածների, չվհատվել, ուժ գտնել թոթափելու անօրենի լուծը, ամեն ինչով նպաստել հայրենիքի ազատագրմանը։ Ընկած հերոսի հիշատակի հավերժացումը նրա գործը շարունակելն է։ Ս. Գևորգյանը, որպես ատաղձ ունենալով վիմագիր բանաստեղծությունները, ներկայացնում է միջնադարյան հայ հայրենասերի ու նահատակի համոզիչ բնութագիրը (չորրորդ բաժին)։

Հեղինակը մի բաժին նվիրել է բարոյախրատական բնույթի բանաստեղծություններին։ Այս վկայագրերի հիմնական թեման հանգուցյալի պատգամն է իր ժառանգներին ու հետևորդներին, կենդանության օրոք չիրականացված իղձերի և անելիքների համար ափսոսանքի դգացում ու հավատ, որ ապագա սերունդները, անալով նրա խրատներին ու հորդորներին, անպայման կյանքի կկոչեն։ Բանաստեղծություններում մեծ տեղ է գրավում այսրաշխարհի ունայնության, մահվան անխուսափելիության գաղափարը, ուստի կյանքում գլխավորը բարձր դիրքի հասնելն ու հարստություն դիզելը չէ, այլ մարդասիրությունը, լավ գործը։ Ուշագրավ է հեղինակի դիտարկումը՝ կապված նմանօրինակ մի քանի բանաստեղծություններում արտահայտված հոգու անմահության գաղափարի ժխտման վաստեղի հետ։

Աշխատության վեցերորդ բաժինը նվիրված է հայկական հավատալիքները, ավանդույթներն ու սովորություններն արտացոլող վիմագիր բանաստեղծությունների քննությանը։ Անդրշիրիմյան կյանքը, անդորությունը բնության տարբեր երևույթների նկատմամբ, կյանքի հավերժականության կամ անմահության գաղափարները սնել ու ստեղծել են ժողովրդական հավատալիքներն ու ավանդույթները՝ սերնդե-սերունդ փոխանցվելով։ Հավատալիքների, ավանդույթների, սովորույթների դաղափարական ատաղձը հեղինակը որոշակիացնում է երկու տեսանկյունից. ա) այս կյանքի ունայնությունը, ձգտումը հանդերձյալ աշխարհում լիարժեք կենսագործունեության, բ) հավատ՝ վերակենդանացման պարագայում չիրականացված իղձերի կատարման նկատմամբ։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում շինարարական բնույթի վիմագիր բանաստեղծությունները (յոթերորդ բաժին)։ Հայ վիմագրության մեջ շինարարական-արձանագրությունները աչքի են ընկնում հավաստիությամբ և ունեն կարևորագույն նշանակություն պատմաճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության համար։ Աշխատությունում քննվող չափածո շինարարական վկայագրերից տեղեկանում ենք կաթողիկոսների (Նահապետ, Ղուկաս Կարնեցի), բազմաթիվ մեկենաս-մեծահարուստների շինարարական գործու-

նեությանն մասին։ Այդ վիմագրերն ուշագրավ վկայություններ են պարունակում նաև շինարարական գործի հետ առնչվող տարբեր հանգամանքների, ղանաղան բնույթի գործարքների, մեկենասների կենսագրության, գործունեության վերաբերյալ։

Աշխատության վերջում ներկայացված են 77 բնագրեր և ծանոթագրություններ, հատուկ անունների ցանկեր, որոնք առավելապես ընդգծում են ուսումնասիրության գիտական արժեքը։

Վերջում կցանկանայինք մի քանի նկատառումներ հայտնել։ Մեր կարծիքով վիմագիր բանաստեղծությունները, ըստ բնույթի, շատ են մանրատված։ Բաղմաթիվ բնագրեր ամենատարբեր մոտիվներ են ներառում և դժվար է դրանք միանշանակ բնորոշել։

Ճիշտ է, աշխատությունը հիմնականում նվիրված է XVIII—XIX դդ. վիմագիր բանաստեղծությունների քննությանը, սակայն, թերևս կարելի էր փոքր-ինչ ավելի հանգամանորեն անդրադառնալ ավելի վաղ հանդիպող նմուշներին, որոնք փոքր թիվ լեն կազմում, հատկապես Ռուսաստանի և Ուկրաինայի հայկական գաղթավայրերում և ցայսօր հատուկ քննության առարկա չեն դարձել։

Նշելով այն իրողությունը, որ վաղ շրջանում վիմագիր բանաստեղծություններ չեն փորագրվել կամ քիչ են փորագրվել, իսկ եղած եղակիները բարձրարվեստ չեն եղել, հեղինակը դա բացատրում է դրանց «հորինման ու զարգացման» համար համապատասխան պայմանների բացակայությամբ (էջ 14)։ Կարծում ենք, որ այս եզրահանդումը հիմնավոր չէ։ Եթե որպես պայման նկատի է առնված բանաստեղծական մտքի բացակայությունը կամ սակավությունը, ապա հանրահայտ է զարգացած միջնադարում ստեղծագործած հեղինակների մի ամբողջ համաստեղություն։ Ինչ վերաբերում է արձանագրությունների փորագրմանը, ապա դեռևս վաղ միջնադարից պահպանվել են հարյուրավոր վայելչագիր վիմագրեր, որոնք աչքի են ընկնում և քանդակման արվեստով, և լեզվի հարստությամբ։ Կարծում ենք, որ ուշ միջնադարում վիմագիր բանաստեղծության զարգացումն ու աշխարհագրական առավել տարածվածությունը կապված էր նոր սովորույթի և արտահայտման ձևերի այլընտրանքի հետ։

Հեղինակը նշում է, որ ուշ միջնադարում վիմագիր բանաստեղծության զարգացմանը համընթաց «զարգացում ու ճոխություն են ապրում հայ ճարտարապետական փոքր ձևերը (մատուռներ, խաչքարեր, դամբարաններ, տապանաքարեր, աղբյուր-հուշարձաններ) իբրև արվեստի նմուշներ ավելի կատարյալ են դառնում» (էջ 15)։ Համակարծիք չենք այս բնութագրմանը։ Մի՞թե մատուռների, խաչքարերի, մասամբ նաև տապանաքարերի լավագույն նմուշները չեն ստեղծվել զարգացած միջնադարում, ո՞ւր մնացին մեր հանճարեղ քարգործ վարպետների՝ Մոմիկի, Պողոսի և այլոց կոթողները։ Հեղինակն այս կապակցությամբ մեջբերում է Հ. Աճեմյանի միտքը զարդաքանդակների «ավելի ձևավոր, ավելի նուրբ և ավելի ճաշակավոր» և «գրեթե գեղեցիկ և համաչափ...» (էջ 16) լինելու մասին։ Վերոհիշյալ հեղինակի խոսքը վերաբերում է միայն տապանագրերին, ինչը նույնպես չի կարելի միանշանակ ընդունել։

Նշված տարակարծությունները ստվեր չեն գցում ուսումնասիրության գիտականության և կարևորության վրա։ Այն մեծապես լրացնում է ինչպես միջնադարյան բանաստեղծության, այնպես էլ վիմագրության ուսումնասիրության ասպարեզում եղած թերին։

Գ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու